
**ՄԱՐԴՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ
ՄԱՏՅԱՆՈՒՄ**

(պոեմի 1000-ամյակի առթիվ)

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ս. Մ.

Գր. Նարեկացին մեր իրականության մեջ կատարում է այն դերը, ինչ իտալական Վերածնության մեջ Դ. Ալիգիերին¹, իրենից հետո թողնելով հանճարներին բնորոշ առեղծվածներ, որոնց լուծման համար երկար ժամանակ է պետք: Նա փայլատակում է մտավոր մի քանի բնագավառներում /բանաստեղծական արվեստ, երգարվեստ, աստվածաբանություն և այլն/՝ տարածելով իր բարերար ազդեցությունը հայ հոգևոր կյանքի բոլոր բնագավառների վրա:

Պետք է խոստովանել, որ գնահատումների ժամանակ, մանավանդ այս դեպքում, կան որոշակի դժվարություններ: Օրինակ, ինչպե՞ս կոչել Մատյանի ժանրային կառույցը՝ պոե՞մ, աղոթամատյա՞ն, ողբերի մատյա՞ն, մատյան ողբերգությա՞ն, թե՞ անվերապահորեն կենտրոնանալ որևէ մեկի վրա՝ աչքի առջև ունենալով բնորոշիչների այսպիսի բազմություն: Վերնագրային անվանման հարցում ինչպե՞ս վարվել. որքանո՞վ է այն համապատասխանում իր նշանակությանը: Թվում է, թե երկն այդպես է կոչվում, քանզի նրանում նկարագրվում են մարդկային ողբն ու կոծը, տառապագին ապրումները, մահը և կորուստը: Ուստի և հեղինակի բնորոշումը՝ «...Առիթ արտասուաց, պատճառ աղալթից՝ ի խնդրոյ հայցման հարց միանձանց եւ բազմաց անապատականաց ասացեալ **Մատենան ողբերգութեան** Գրիգորի Նարեկայ վանից վանականի»² դառնում է ընդունելի: Այն պայմանականորեն կարող ենք անվանել պոեմ՝ մնալով դեռևս ավանդական ըմբռնումների շրջանակներում, մինչև խնդիրը վերջնականապես պարզվի:

Իբրև արվեստագետ, նա նման է Արևելքի միստիկներին³, որոնք բնության պաշտամունք ունեն, քանզի նյութական գոյի մեջ ևս տեսնում են Աստծուն⁴: Նման է և վաղ շրջանի ճգնավորներին, որոնք մարմնական տանջանքների մեջ են փնտրում միաիթարություն: Մատյանը որոշ չափով մոտենում է և սուֆիզմի սկզբունքներին⁵, բայց իր հերթին առաջադրում է նոր խնդիրներ, որոնք բնորոշ են միայն իրեն: Եթե ալ Մութանարին (IX-X դդ.), ալ Մահարին (XI դ.) զարգացնում են Աստծու հետ ձուլվելու գաղափարը⁶, ապա Գր. Նարեկացին առաջադրում է շնորհով աստվածանալու

¹ Տե՛ս Մկրչյան Ս., Հայ հին գրականության պատմություն, Ե., 1976, էջ 535:

² **Գրիգոր Նարեկացի**, Մատենան ողբերգութեան, Ե., 1985, էջ 245 (այսուհետև հատվածները կտրվեն գլխահամարներով):

³ Տե՛ս Պարսումյան-Տատոյան Ս., Մաքրության եղբայրության թուղթերը (Բանբեր Երևանի համալսարանի, 1991, N 1, էջ 63-64):

⁴ Տե՛ս **Степанянц М. Т.**, *Философские аспекты суфизма*, М., 1987, с. 40-41.

⁵ Տե՛ս **Թամրազյան Հ.Հ.**, Գրիգոր Նարեկացին և կիլիկյան արվեստի դպրոցը (Պատմա-բանասիրական հանդես, 2003, N 2, էջ 41-44):

⁶ Տե՛ս **Թահմիզյան Ն.**, Գր. Նարեկացին և հայ երաժշտությունը 5-15-րդ դդ., Ե., 1985, էջ 65-70:

խնդիրը⁷: Այս դեպքում մենք գործ ունենք սկսվող վաղ Վերածնական շարժման հետ, որի սկզբնավորողներն իրենք, որպես կանոն, այն ավարտին չեն հասցնում⁸: Մյուս կողմից՝ Գր. Նարեկացին իր ստեղծագործությամբ և մասնավորաբար Մատյանով շարունակում է Նարեկա վանքի գեղագիտական, բանաստեղծական և երաժշտական ավանդները, երբ նրա որոշ մասեր հորինվում են իրենց մեղեդիներով⁹:

Աշխարհի մասին միջնադարյան պատկերացումն այնպիսին է, թե այն բաղկացած է երկու կամ երեք հարկերից՝ Երկնքից ու Երկրից կամ՝ Երկնքից, Երկրից և Ստորերկրյայքից /ծովից/¹⁰: Այսպիսի պատկերացում ունի և Գր. Նարեկացին, գիտի դրանց փոխկապակցվածության մասին: Դառնահեծ հառաչանքներն ուղղելով Աստծուն՝ հերոսը մատուցում է իր պատարագը: Անարյուն գոհաբերությունն այստեղ սրբազան ծես է, որով սկսվում է նրա պայքարը հանուն կյանքի: Բանաստեղծը զարհուրում է Երկրորդ գալստից, որովհետև կարող է անպատրաստ գտնվել դրան: Նարեկի ամբողջ տրամաբանությունը դրան նախապատրաստվելն է: Նա կռահում է գալիք փոթորկի ահագնությունը.

Այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց,
Որ յիմունս անձի ցուցանի,
Խռովութիւնս ամբոյխից՝
Հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր,
Խորհրդոցն հոյք չարեացն ընդ բարիսն,
Եւ գերեալ զիս ի մահ, ըստ հին դիպուածոյն,
...ԶՔրիստոսի փրկութիւնն յաղթող ցուցանէ /Ա,Բ/:

Նախքան շնորհին արժանանալը վախենում է մահանալ և կյանքի գրքից դուրս մնալ: Ժամանակի մեծերի ողբերգության ակունքներից մեկն էլ աշխարհի երկատվածության գիտակցումն է: Այն տարածվում է բնության, հասարակության ու անհատի վրա: Այդ կացությունը պայմանավորված է առաջին մեղքով, որին ավելանում է նաև անձնականը: Լ. Մկրտչյանը Նարեկացու և Ֆ. Դոստոևսկու հերոսների միջև ընդհանրությունը հենց այս հողի վրա է տեսնում¹¹: Ներհակությունները կապվում են նաև մեր հնագույն դիցաբանական պատկերացումների հետ և մասնավորաբար միթրաիզմի և մանիքեականության: Մեզանում դա ցայտուն է դրսևորվել «Սասնա ծռերում»: Բայց Մատյանում ևս ականատես ենք լինում աշխարհի երկփեղկված ընկալման: Այսպես.

⁷ Տես **Չալոյան Վ.**, Հայոց փիլիսոփայության պատմություն (Հին և միջին դարեր), Ե., 1975, էջ 349-355: Թեև հեղինակի շատ հարցադրումներ կորցրել են իրենց արդիականությունը, բայց սկզբունքային խնդիրներում նա մնում է ավելի նախընտրելի:

⁸ Տե՛ս **Лосев А.Ф.**, Эстетика Возрождения, М., 1978, с. 30-45.

⁹ Տե՛ս **Թահմիզյան Ն.**, նշվ. աշխ., էջ 70-78:

¹⁰ Տե՛ս **Ավետիսյան Զ.**, Քրիստոնեական տիեզերքը Ե դարի մատենագրության մեջ (Քրիստոնեությունը և հայ գրականությունը, Ե., 2001, էջ 40-44):

¹¹ **Мкртчян Л.**, Пусть рассказана будет... (Читая Нарекаци, Е., 1997, с.4).

Ըմպանակք երկու յերկուսին ձեռին,
 Մինն՝ արեամբ, եւ միւսն՝ կաթամբ,
 ...Հայեցուածք դիմաց երկուց,
 Մինն՝ դոյզն ողորանաւք, եւ միւսն՝ անանխայելի բարկութեամբ,
 Համբարձումն երկակի բազկաց,
 Ոմն՝ ի հարուածս, եւ ոմն՝ ի մերժումն,
 Դէմք կրկնակի կերպից,
 Մինն՝ տխրեալ, եւ միւսն՝ ցասուցեալ,
 Կշտամբանք ընդ միոյ երկու,
 Մինն՝ աստեացս, եւ միւսն՝ ապառնեացն,
 ...Ցայգ ցաւագին երկուց վտանգից,
 Մինն՝ լալոյ, եւ միւսն՝ մահու,
 Առաւաւտ սգոյ երկուց բողոքմանց,
 Մինն՝ սաստից, եւ միւսն՝ սպառնալեաց,
 Արեգակունք երկու ի յերկուց ծայրից,
 Մինն՝ խաւարի, եւ միւսն՝ կիզման / Լ, Բ/:

Սոգտանքի ու կսկիծի տրամադրությունը երկար է ուղեկցում բանաստեղծին: Սրտի խորքերից նա հարցնում է.

Եւ արդ, զին՞ չ գործեսցես, անձն իմ կորուսեալ,
 Կամ ու՞ր թաքիցես, կամ զիա՞րդ ապրեսցիս,
 Կամ ո՞րպէս ելցես ի մեղացդ բանտէ,
 Քանզի բազում են պարտիքդ, եւ անթիւ՝ հատուցմունքն / Ը,Ա/:

Դատաստանի պատկերը հանգիստ չի տալիս նրան: Նա պարզ տեսնում է անցնելիք ճանապարհը և սարսափելի փորձությունները: Բացի նրանից, որ Նարեկացին կյանքը պատկերացնում է ծփացող ծովի պատկերով, իր հոգում ևս կրում է այդ մրրիկը: Մ.Մեծարենցի պատկերավոր բնորոշմամբ, Մատյանը է «հոգեկան վրդով մրրիկ մը և ալեկոծություն մը՝ ուր բառերն ու կշռությունները ալիքներու բախումին չափակցությունը՝ անոնց ինքնակործան շաչումները՝ անոնց իրարահալած խաղացքն ու անկումները ունին»¹²: Մարմինը համեմատում է նավի, կյանքը՝ ծովի հետ: Իր խարխուլ շինվածքը ավերվում է՝ անպատրաստ լինելով փորձություններին: Յուրաքանչյուր մարդ նման դեպքերում անպատրաստ է լինում գալիք փորձություններին:

Քանզի մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյսն վստահութեամբ,
 Դոյզն կասկած արկածից ի միտ բերելով առ խտրոց փոքր միջոցին,
 Որ ի մէջ հանգստեանն եւ աշխատութեանն,
 Իբր այն թէ հասեալ իցեմ,

¹² Մեծարենց Մ., Նարեկացիին հետ, Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1981, էջ 266:

Զմեռն յամարայնի բքաբեր հողմով ժամանեալ՝
Երեքալեանն դիմակցութեամբ ամբոխեաց զհանդարտութիւնն,
Ուստի նաւն ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ /ԻԵ,Բ/:

Իր կործանված խլկակի վրա խոնարհված՝ բանաստեղծը, ձեռքը ծնոտին դրած, արտասուքի գետ է հոսեցնում: Նրա հույսը օբարի նաւապետօ-ն է, որն ի խայտառակություն մարդկության՝ կլացի նաև իր վրա, ինչպես լացել է իր բարեկամի, մոլորյալ Հուդայի և մոլորյալ Երուսաղեմի վրա: Մահը ստեղծագործության շատ դրվագներում խորհրդանշական է: Որոշ դեպքերում այն ձեռք է բերում իրական գծեր, ինչպես դա դրսևորվում է Վերածնության մեծերի իրապաշտական արվեստում: Այսպես.

Տու՛ր հանգիստ բերկրութեան
Մահագոյնս նիրհման
Ի խորութեան գիշերիս՝
Բարեխաւսութեամբ հայցուածոց
Սրբոյ Աստուածածնիդ
Եւ ամենայն ընտրելոց:
Ամփոփեալ պարուրեա՛
Զպատուհան տեսութեանց
Զգայարանացս իմաստից՝
Անգարհուրելի գետեղմամբ
Ի ծփական խռովութեանց,
Կենցաղական զբաղմանց,
Անրջական երագոց.../ԺԲ,Դ/:

Ճիշտ է, բանաստեղծը երագի մասին իր ասելիքը համառոտում է, սակայն պարզ է, որ նրա համար այս կյանքն ավելի է երագական, քան ինքը՝ երագը: Ընդհանրապես հին աշխարհատեսության մեջ այն կապում է երեք ոլորտները¹³ տիեզերական ծառի միջոցով, որով թափանցում են ժամանակային բոլոր տիրույթները: Երագը նման դեպքերում մեկնողական նշանակություն է ունենում, հաղորդակցություն ապահովում անդրաշխարհայինի և աստվածայինի հետ:

Մատյանի հերոսը ցանկանում է փրկել իր անձը մահվանից: Արտաքին իմաստուններից մեկը (նկատի ունի հեթանոս գիտնականներին) չար է համարում մահը՝ չիմանալով դրա պատճառը, որի համար էլ կորչում ենք, սակայն չենք գիտակցում դա: Ու թեև ինքը վկայում է այդ մասին, բայց իր գիրքն առաջարկում է որպես մարմնի ցավերն ամոքող «կենաց դեղ»: Չարի պատճառով, նրա նախանձի հետևանքով ինքը (նախորդները ևս) կորցրել է բնական վիճակը, ինչպես դա հաստատում է Հովի. Բմաստասերը: Եվ այժմ դրանից ազատվելու միակ հնարավորությունը Աստծու հետ համակողմանիորեն հաղորդակցվելն է, նրա

¹³ Տե՛ս **Джагаддева**, *Волшебное сокровище сновидений*, М., 1996, с.7.

օգնությամբ մեղքերից ազատվելը, դրանցից մաքրվելը և չարիքից փրկվելը: Մարդը նաև համակերպվել է այդ ամենի հետ իր ծուլության պատճառով: Հոգու և մարմնի հակադրությունը հաճախ ընկալվում է չարի և բարու ձևով: Սակայն չարի և բարու ներհակությունը գոյություն ունի միայն մարդկային գիտակցության մեջ, բայց ոչ դրանից դուրս: Զարգացմանը նպաստող բնության ուժերը բնավ չեն նույնանում մարդու բարոյական ըմբռնման հետ: Զմեռը և ամառը բացառում են իրար մեր գիտակցության մեջ, իսկ իրականում շարունակում են իրար: Ամառը լավ կամ վատը չէ, այլ այնպիսին է, ինչպիսին կա: Կատարյալ կյանքով ապրելու համար պարտադիր չէ, որ մեր կողքին մշտապես գործի չարը, քայքայի ամեն ինչ: Կյանքը կանգ չի առնի, այլ զարգացման իր ուրույն ընթացքն ունի: Չարիքն առաջընթացի ճանապարհ չէ: Եթե Գր. Նարեկացու համար կատարյալը գեղեցիկը բարձրացնելն է, բարիք գործելը և Աստծո՝ տիեզերական բարիքի հետ հաղորդակցվելն է, ապա, օրինակ, հարավ-ամերիկյան կոգի ցեղի մարդկանց ըմբռնմամբ, կատարյալը չարի և բարու միջև հավասարակշռություն պահպանելն է¹⁴: Մեր պատկերացումներում բարիքը կատարյալ է, եթե կապված է մարդու փրկագործության հետ: Փաստ է, որ չարն էլ իր անտեսանելի կրողներն ու դիվական ուժերն ունի:

Չարի գաղտնի որոգայթները, ծածկվածությունը թակարդում է մարդուն, և նա չի կարող խուսափել ծուղակներից: Անհնար է ազատվել անգամ դեմքից գուրկ այդ նգովված էակներից: Այսպես.

Բոսոտք ճապուկք, շարժողականք և ազգի ազգիք,
Որդունք աղեաց գաղտակուրք, խաղաւարտք հրակայծակք,
Եւ բիծք բոցակիծք անկերպաւորք,
Եւ երամակք ոմանց քրտնածինք,
...Ըստ նմանութեան դիւաց գիշերամարտից
Եւ մեկնակազէն բարբարոս գնդից խաւարասիրաց,
Եւ գազանութեամբ քանասար գայլոց արաբացոց.../ԿԹ,Բ/:

Զգալով վտանգը՝ խորամանկ ու դավաճան աղվեսների պես փախչում ու ազատվում են, «Զի յերկիւղէ մահուն ապրեցին»: Իրենց անձով չքոտի այդ նվաստները թափանցում են ռամկի խրճիթից մինչև թագավորական պալատների վերնահարկերը.

Քաջք արանց արեաց, որք իշխեցին ամբոխից
Եւ տիրեցին ժողովրդոց և առին զքաղաքս ազգաց,
Զպարտութիւն իւրեանց զաւրաւոր ձեռինն ինքեանք վկայեն,
Թէ՛ Քանզի ոչ կարացաք ի դիմի հարկանել վեհիցն բռնութեան,
Վասն այնորիկ խոյս տուեալ՝ հասաք յայս տեղի /ԿԹ,Բ/:

Զեռունների դեմ մղած անիմաստ պայքարը հասցնում է կատարյալ փակուղու: Նրանց ծուղակում են հայտնվում իշխան, արքա, աշխարհակալ հզորներ ու ստիպված

¹⁴ Элиаде М., *Космос и история*, М., 1987, с.214.

են տեղի տալ և նահանջել՝ այլ ելք չունենալով: Այդ չնչինների միջոցով առաջ է մղվում մահվան, քայքայման ու անհետացման ոգին: Չկա մի տեղ, որ նրանցից փախչելով՝ մեկնումեկն ազատվի: Պատկերը բանաստեղծը հորինում է՝ ցույց տալու դժոխքը: Խելամտորեն նա խուսափում է դժոխքը նկարագրելու մանրամասներից, որպեսզի չկանգնի չտեսածը պատկերելու պարտադրանքի առաջ, սակայն համոզված է, որ դրանք այնտեղ կլինեն: Փրկությունը կրկին կապված է Աստծո հետ:

Գր. Նարեկացին առաջարկում է վերջնական փրկագործության բանաձևը՝ հոգով և մարմնով վերակենդանանալու գաղափարը: Ընտանի այդ դավաճանի՝ սատանայի վերացումից հետո ամեն ինչ իր բնական վիճակին կվերադառնա: Նա հույս ունի.

Արդ, իցե՞ թե յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ,

Իցե՞ արդեւք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ,

Իցե՞ արդեւք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ վերստին կցեալ.../ԻԵ,Դ/:

Հերոսը լիահույս է, որ իր կասկածները ի չիք կդառնան: Աստված կյանքը դեպի բարին կտնօրինի, և հոգին ու մարմինը՝ ներհակ այդ գոյերը, □կհաշտվեն□ ու կվերամիավորվեն: Յուրաքանչյուր մարդու համար կգտնվի փրկության ելք, միայն թե պետք է պայքարել: Աստված կգթա թե՛ մեղավորին, թե՛ անմեղին, եթե նրանք անկեղծորեն զղջան: Նարեկացին մեծ բարոյագետ է, բայց չի խրատում, այլ ցույց է տալիս այն, ինչից պետք է հրաժարվել: Ամեն դեպքում նա չի հանդուրժում որևէ նահանջ՝ դրսևորելով մաքսիմալիզմ¹⁵ կատարելության խնդրում: Բայց դա այնքան խորն է ու պատճառաբանված, որ բանաստեղծին մեղադրելն անհնարին է: Նրա տառապանքի մեջ կա մաքրագործող ուժ: Աշխարհն իր վտանգներով ու վթարներով վախեցնում է Սատյանի հերոսին: Դա նման է այն սարսափին, որ ապրում է մարդկությունը պատմական ժամանակի նկատմամբ՝ նրանում տեսնելով ուրվագծվող կամ նոր ծառացած արհավիրքները¹⁶: Սա էլ իր հերթին ծնում է մի տեսակ աշխարհամերժում, ինչպես դա բնորոշ է ժամանակակից էկզիստենցիալիստներին¹⁷, իհարկե, ոչ աշխարհը չընդունելու իմաստով: Տեսանելի-նյութական աշխարհում այսերկրային ժամանակը ապանյութականանալու վտանգ ունի իր մեջ: Իսկ մահը բովանդակագրկում է այն անհատի ճակատագրում.

Տարր ժամանակիս՝ յանէից,

Անցեալն՝ անյայտ, եւ ապառնին՝ կարծողական,

Ես անհամբեր, եւ բնութիւն՝ թերահաւատ,

Ուտք՝ անհաստատք, եւ միտք՝ ցնդեալք,

¹⁵ Տե՛ս **Айтматов Ч.**, *Дорогой Левон /письмо/* (Читая Нарекаци, с.69).

¹⁶ Տե՛ս **Элиаде М.**, նշվ. աշխ., էջ 203-205:

¹⁷ Տե՛ս **Քամյու Ա.**, Հույսը և աբսուրդը Ֆրանց Կաֆկայի երկերում (Կաֆկա Ֆ., Դատավարություն, Ե., 1991, էջ 213-227):

...Մարմին՝ մեղսամակարդ, եւ յաւժարութիւն՝ երկրասեր,
 Դիմամարտութիւն՝ տնկակից, եւ խառնակութիւն՝ ներհակական,
 Բնութիւն՝ կաւեղէն, եւ անձրեւք՝ ուժգնակիք,
 ...Աշխատութիւնք՝ ընդունայնք, եւ վայելմունք՝ երազականք,
 Համբարք՝ ոչնչից, եւ պահեստք՝ հողմոց,
 Նմանութիւնք՝ ստուերաց, եւ կերպարանք՝ ծիծաղելիք /ՕԵ,Ե/:

Անհայտ ու անցողիկ ժամանակի մեջ հոսքն ուղղված է դեպի ոչնչացում ու անհետացում: Դա ժամանակի հավերժական գաղտնիքն է: Եւ կրկին կյանքը ստվերանման է, մարդը՝ ստվեր, կերպարանքը՝ ծիծաղելի: Մատյանի այս ամենագեղեցիկ դրվագներից մեկը վկայում է կյանքի անցողիկության և երազայնության մասին: Անիրականն անցողիկն ու այսերկրայինն է, իրականը՝ այներկրայինն ու հավերժականը: Այս դեպքում մարմինը երկրայինի, հոգին երկնայինի կրողներն են: Մարմինը կավեղէն է, հոգին՝ աստվածեղէն: Հավերժող գոյի հետ հաղորդվելը երջանկություն է Նարեկացու համար, նա սիրում է աշխարհը, նրա նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունի: Աշխարհի երփներանգ գոյները, շողը, մարգարտյա շաղը նրա նյութական կողմի և գեղեցկության մասին են վկայում¹⁸/ խոսքը «Վարդավառի» տաղի մասին է/:

Ժամանակը երկու ընկալում ունի՝ այսերկրայինի /ժամանակավորի/, այներկրայինի /հավերժականի/: Այսերկրայինը մարդու գործունեության տիրույթն է, նրա կամքի դրսևորման դաշտը¹⁹, այներկրայինը՝ հավերժական աստվածայինը: Հաստատապես կարելի է ասել, որ Նարեկում օգտագործվում է ոչ զծային

/պատմական/ ժամանակը: Ընդհակառակն, տիրապետողը ցիկլային՝ շրջանաձև ժամանակն է: Նրանում առկա է մեկ ժամանակային տիրույթ՝ հավերժական անցյալը²⁰: Սա էլ առավել բարձրացնում է ժամանակի ընկալման յուրահատկությունը:

Գր. Նարեկացին այն բանաստեղծն է, ով ամենից շատ է դիմում «Աստվածաշնչին»՝ բերելով նրանից բազմաթիվ վկայություններ, հիշելով հազարավոր անուններ, անթիվ անգամ դիմելով Հիսուսի կերպարի ամենազանազան մարմնավորումներին: Ճիշտ կլինի ասել, որ նա համարձակորեն փորձում է նորովի «ընթերցել» Գիրքը՝ չհեռանալով նրա կարևորագույն սկզբունքներից՝ սահմանված Առաջին երեք տիեզերական ժողովների կողմից: Նկատելի հակաքաղկեդոնական է, Ս. Երրորդության պաշտպան: Երջանկությունը նա չի փնտրում հաճույքների և կերուխումի մեջ. դա նույնիսկ ծիծաղելի կլիներ: Սակայն նա սոսկ ծեսով չէ, որ ձգտում է հասնել կատարյալին: Առավել կարևորվում է **աներկբա հավատն առ Աստված**: Այս իմաստով Մատյանը շատ հեռու է հոռետեսական լինելուց: Նա լավատեսական հզոր ու պոռթկուն ներուժ ունի իր մեջ: Դա արտաքուստ նման է ասեղաշունչ միջուկային պայթյունի, որն իր հետ սրբում-տանում է ճանապարհին

¹⁸ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Ե., 1957, էջ 59-60:

¹⁹ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 345:

²⁰ Տե՛ս Եղիազարյան Ազ., «Մասնա ծոեր» էպոսի պոետիկան, Ե., 1999, էջ 191-197:

հանդիպած ամեն ինչ: Բայց ոչ թե ամլացնում է ամեն ինչ, այլ դրականորեն վերափոխում, մաքրում և լուսավորում, որ շուրջը լցվի սիրով ու մարդասիրությամբ: Նա աստվածային խղճի մեծագույն կրողներից մեկն է, իր Մատյանով կապ է ստեղծում երկրի և երկնքի միջև: Հասնելով վերին ոլորտներ՝ Նարեկացին նախապես մաքրագործվում է, կատարում համապատասխան արարողություն և մուտք գործում երկինք: Դրանով նա վերադառնում է իր նախասկզբին: Ներքևում են մնում տանջանքներն ու կրքերը: Լույսի և ջերմության անպարագիծ մի տարածք, ուր բնակվում են աստվածայինները.

Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝
Շնորհաւք քո, գրած, ի քեզ զաւրացեալ՝ քեւ նորոգեցայց,
Զատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ՝
Ի յարութիւնն արդարոց, Հաւր քում աւրինեցեալ /ՂԵԳ/:

Եվ դարերի միջով անցնում ու հարատևում է Մատյանը՝ գրավելով մարդկային հոգիները:

ПРИЗЫВ К СОВЕРШЕНСТВУ ЛИЧНОСТИ В ПОЭМЕ ГРИГОРА НАРЕКАЦИ „КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ”

(к 1000-летию поэмы)

МХИТАРЯН С. М.

Резюме

Исследование жанра поэмы великого поэта средневековья сложно с точки зрения ее структуры.

Поэт выдвигает проблему жизни и смерти, рассматривая ее в двух измерениях – преходящем и вечном. Лишь при искоренении зла возможна гармония во вселенной. Во имя спасения герой поэмы стремится к совершенству, считая его главной целью жизни. Для поэта счастье заключается в вечной жизни, поскольку для него понятие совершенства и вечности равнозначны.